# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 ՀՈՒՆՎԱՐԻ 2023թվականի N 001-Ա

### ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 18 ՀՈՒՆՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 01 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջով՝ Արենի համայնքի ավագանին ***որոշում է.***

Հաստատել Արենի համայնքի ավագանու 18-ը հունվարի 2023թվականի թիվ 01 արտահերթ նիստի հետևյալ օրակարգը.

1. Արենի համայնքի ավագանու 18.01.2023թվականի թիվ 01 նիստի օրակարգը հաստատելու մասին:

2. Արենի համայնքի ավագանու 2022թվականի թիվ 137-Ն, թիվ 139-Ա և թիվ 160-Ա որոշումների մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:

3. Արենի համայնքի վարչական տարածքում գտնվող գյուղատնտեսական նշանակության հողամասերի նպատակային նշանակությունը փոխելուն համաձայնություն տալու մասին:

4. Արենի համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող 2023թվականի գույքի կառավարման պլանը հաստատելու մասին:

5. Արենի համայնքի 2023թվականի տարեկան բյուջեն հաստատելու մասին:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՔԱՆԻԿ

ԱՍԱՏՐՅԱՆ ՄՀԵՐ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԽԱՉԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԱՉԵ

ԾԱՏՈՒՐՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ՂԱԶԱՐՅԱՆ ԳՆԵԼ

ՂԱԶԱՐՅԱՆ ԳՐԻՇԱ

ՍԱՀԱԿՅԱՆ ՀՈՒՍԻԿ

ՍԱՄՎԵԼՅԱՆ ՍԵՎԱԿ

ՍՄԲԱՏՅԱՆ ՆԱՐԻՆԵ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

## Ո Ր Ո Շ Ու Մ

18 ՀՈՒՆՎԱՐԻ 2023թվականի N 002-Ա

### ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 137-Ն, ԹԻՎ 139-Ա ԵՎ ԹԻՎ 160-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի պահանջով, Արենի համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Արենի համայնքի ավագանու 2022 թվականի նոյեմբերի 30-ի <<2023 թվականի համար Արենի համայնքի տարածքում տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին>> թիվ 137-Ն որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները՝ հավելվածի 5-րդ կետի 1-ին ենթակետի մեջ <<տասը հազար>> բառերը փոխարինել <<երեսուն հազար>> բառերով:

2. Արենի համայնքի ավագանու 2022թվականի <<2023 թվականի համար Արենիի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> թիվ 139-Ա որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) հավելվածի համայնքային քաղաքական պաշտոններ բաժնում ավելացնել նոր 3-րդ կետ և ընդամենը տողը խմբագրել.

| հ/հ | Հաստիքի անվանումը | հաստիքային միավորը | աշխատակիցների թվաքանակը | պաշտոնային դրույքաչափը | աշխատավարձի չափը |
|---|---|---|---|---|---|
| | համայնքի ղեկավարի տեղակալ | 1 | 1 | 330 000 | 330 000 |
| | Ընդամենը | 3 | 3 | 1 280 000 | 1 280 000 |

2) Հավելվածի համարները վերախմբագրել 1-ից մինչև 53:

3) Հավելվածի 5-րդ տողում <<համայնքի ղեկավարի օգնական>> բառերից հետո ավելացնել <<Արենի բնակավայրի պատասխանատու>> բառերը:

4) Հավելվածի 6-րդ տողում <<մամուլի խոսնակ բառերը>> փոխարինել <<օգնական>> բառով:

5) 52-րդ կետը տեղափոխել համայնքային հայեցողական պաշտոններ բաժնի 7-րդ կետ:

6) 7-րդ կետից հետո խմբագրել ընդամենը տողը՝

| | | | | |
|---|---|---|---|---|
| Ընդամենը | 3.5 | 4 | 940 000 | 885 000 |

7) Աղյուսակի վերևում <<67>> թիվը փոխարինել 68 թվով:

8) Աղյուսակի վերջին ընդամենը տողը խմբագրել հետևյալ կերպ.

| | | | | |
|---|---|---|---|---|
| Ընդամենը | 61.5 | 68 | 12 304 000 | 13 170 000 |

3. Արենի համայնքի ավագանու 22.12.2022թվականի <<Արենի համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերից աճուրդ-վաճառքով օտարելու մասին>> թիվ 160-Ա որոշման 1-ին կետի 1.1 ենթակետի մեջ <<0.16034>> թիվը փոխարինել <<0.17076>> թվով:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԱՍԱՏՐՅԱՆ ՄՀԵՐ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԽԱՉԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԱՉԵ

ԾԱՏՈՒՐՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ՂԱԶԱՐՅԱՆ ԳՆԵԼ

ՂԱԶԱՐՅԱՆ ԳՐԻՇԱ

ՍԱՀԱԿՅԱՆ ՀՈՒՍԻԿ

ՍԱՄՎԵԼՅԱՆ ՍԵՎԱԿ

ՍՄԲԱՏՅԱՆ ՆԱՐԻՆԵ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 ՀՈՒՆՎԱՐԻ 2023թվականի N 003-Ա

## ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈՓՈԽԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի 1920-Ն որոշումը, 2021թվականի հունիսի 17-ի թիվ 987-Ն որոշմամբ սահմանված կարգի 1-ին մասի 14-րդ կետը, Արենի համայնքի ավագանին ***որոշում է՝***

Տալ համաձայնություն.

1. Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող, Վարդան Համբարձումի Համբարձումյանին սեփականության իրավունքով պատկանող 0.42175 հա գյուղատնտեսական նշանակության հողամասի (ծածկագիրը՝ 10-008-0179-0017, հողատեսքը՝ այլ) նպատակային նշանակությունը փոխադրել բնակավայրերի հողերի կատեգորիա՝ հասարակական կառուցապատման գործառնական նշանակության՝ համայնքում նոր ներդրումներ և աշխատատեղեր ստեղծելու նպատակով:

2. Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող, Նարինե Ժորժիկի Մկրտչյանին սեփականության իրավունքով պատկանող 0.05710 հա գյուղատնտեսական նշանակության հողամասի (ծածկագիրը՝ 10-008-0254-0006, հողատեսքը՝ խոտհարք) նպատակային նշանակությունը փոխադրել բնակավայրերի հողերի կատեգորիա՝ հասարակական կառուցապատման գործառնական նշանակության՝ հողամասում առկա 4.59 քմ մակերեսով ինքնակամ կառույցը օրինականացնելու և բիզնես գործունեությունը ընդլայնելու նպատակով:

3. Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող, Արենի համայնքին սեփականության իրավունքով պատկանող 0.00581 հա գյուղատնտեսական նշանակության հողամասի (ծածկագիրը՝ 10-008-0254-, հողատեսքը՝ այլ) նպատակային նշանակությունը փոխադրել բնակավայրերի հողերի կատեգորիա՝ հասարակական կառուցապատման գործառնական նշանակության՝ հողամասում առկա 54.04 քմ մակերեսով ինքնակամ կառույցը օրինականացնելու և կառուցապատող Նարինե Ժորժիկի Մկրտչյանին ուղղակի վաճառքով օտարելու նպատակով:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԱՍԱՏՐՅԱՆ ՄՀԵՐ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԽԱՉԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԱՉԵ

ԾԱՏՈՒՐՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ՂԱԶԱՐՅԱՆ ԳՆԵԼ

ՂԱԶԱՐՅԱՆ ԳՐԻՇԱ

ՍԱՀԱԿՅԱՆ ՀՈՒՍԻԿ

ՍԱՄՎԵԼՅԱՆ ՍԵՎԱԿ

ՍՄԲԱՏՅԱՆ ՆԱՐԻՆԵ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 ՀՈՒՆՎԱՐԻ 2023թվականի N 004-Ա

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 2023ԹՎԱԿԱՆԻՆ ՕՏԱՐՎԵԼԻՔ, ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ԵՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀԱՏԿԱՑՎՈՂ ԳՈՒՅՔԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջներով՝ Արենի համայնքի ավագանին ***որոշում է՝***

Հաստատել Արենի համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող 2023թվականին օտարվելիք, վարձակալությամբ և անհատույց սեփականության իրավունքով հատկացվող գույքերի ցանկը՝ համաձայն սույն որոշման հավելվածի:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՔԱՆԻԿ

ԱՍԱՏՐՅԱՆ ՄՀԵՐ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԽԱՉԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԱՉԵ

ԾԱՏՈՒՐՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ՂԱԶԱՐՅԱՆ ԳՆԵԼ

ՂԱԶԱՐՅԱՆ ԳՐԻՇԱ

ՍԱՀԱԿՅԱՆ ՀՈՒՍԻԿ

ՍԱՄՎԵԼՅԱՆ ՍԵՎԱԿ

ՍՄԲԱՏՅԱՆ ՆԱՐԻՆԵ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

Հավելված 1
Արենի համայնքի ավագանու
18.01.2023թվականի թիվ 004-Ա որոշման

# ՊԼԱՆ

# ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ

## 1. Համայնքային գույքի կառավարման ընդհանուր բնութագիրը

Արենիի համայնքապետարանի որդեգրած մի շարք սկզբունքների մեջ շատ կարևոր տեղ է հատկացվում համայնքային գույքի կառավարմանը, ինչը նշանակում է, որ համայնքապետարանի և իր ենթակայության ներքո գործող համայնքային կազմակերպությունների կողմից տիրապետվող և օգտագործվող գույքի արդյունավետ կառավարումը համայնքային առաջնահերթություն է: Պետք է նկատի ունենալ սակայն, որ համայնքային գույքի կառավարման որակի բարելավման և արդյունավետության բարձրացման հիմնախնդիրն առաջանում է գրեթե ամեն անգամ, երբ որոշում է կայացվում գույքի կամ դրա որևէ մասի վարձակալության, անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու, օտարման, նվիրատվության, նվիրաբերության, փոխանակության կա՛մ մասնավորեցման մասին որոշումներ կայացնելու, ինչպես նաև գույքի սպասարկման, պահպանման և օգտագործման նկատմամբ հսկողություն սահմանելու ժամանակ:

Արենիի համայնքապետարանը գտնում է, որ գույքի շրջանառությունն աշխուժացնելու, գույքի օտարումից և օգտագործումից ներկայումս՝ ուղղակի և հետագայում՝ անուղղակի, ստացվելիք եկամուտներն ավելացնելու նպատակով անհրաժեշտ է կիրառել նոր մոտեցումներ, ինչի նպատակով էլ խոշորացումից հետո ձևավորված Արենի համայնքի ավագանու որոշմամբ որոշ տեսակի գույքերի օտարման վրա կիրառվում են հատուկ գործակիցներ՝ նպատակ ունենալով գույքի օտարման գինը հասցնել շուկայական միջին գնին:

Կառավարման արդյունավետության բարձրացմանն են միտված նաև խոշորացումից հետո յուրաքանչյուր տարվա սկզբում ավագանու կողմից հաստատվող, տվյալ տարվա կանխատեսվող օտարվելիք, վարձակալության, անհատույց օգտագործման տրման գույքերի ցանկերը:

Հավատարիմ մնալով իր սկզբունքներին և կարևորելով համայնքին պատկանող գույքի պահպանումը և արդյունավետ կառավարումը՝ Արենիի համայնքապետարանը սույն պլանով սահմանում է 2023 թվականի ընթացքում կանխատեսվող օտարվելիք, վարձակալության, անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու, նվիրատվության, նվիրաբերության, փոխանակության կա՛մ մասնավորեցման եղանակներով տրամադրվող, ինչպես նաև տարբեր ծրագրերով համայնքային գույքի վերանորոգման կամ հիմնանորոգման ենթակա գույքերի ցանկը:

### ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԳԱՐԱԿԱՁՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, 2023ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՕՏԱՐՎԵԼԻՔ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՑԱՆԿ

| Հ/հ | Հողամասի նպատակային նշանակությունը | Հողամասի գործառնական նշանակությունը կամ հողատեսքը | հողամասի չափը (հա) | նշումներ |
|---|---|---|---|---|
| 1 | Բնակավայրերի | հասարակական կառուցապատման | 0.5 | |
| 2 | Գյուղատնտեսական | վարելահող | 3 | |
| | Ընդամենը | | 3.5 | |

### ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԳԱՐԱԿԱՁՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, 2023ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՀԱՏԿԱՑՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՑԱՆԿ

| Հ/հ | Հողամասի նպատակային նշանակությունը | Հողամասի գործառնական նշանակությունը կամ հողատեսքը | հողամասի չափը (հա) | նշումներ |
|---|---|---|---|---|
| 1 | Գյուղատնտեսական | արոտավայր | 150 | |
| 2 | Գյուղատնտեսական | խոտհարք | 15 | |
| | Ընդամենը | | 165 | |

### ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԱՎՆԱՁՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ,

2023ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՕՏԱՐՎԵԼԻՔ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՑԱՆԿ

| Հ/հ | Հողամասի նպատակային նշանակությունը | Հողամասի գործառնական նշանակությունը կամ հողատեսքը | հողամասի չափը (հա) | նշումներ |
|---|---|---|---|---|
| 1 | Գյուղատնտեսական | պտղատու այգի | 0.6 | խաղողի այգի |
| 2 | Գյուղատնտեսական | վարելահող | 7 | |
| 3 | Բնակավայրերի | բնակելի կառուցապատման | 0.8 | |
| 4 | Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության | արդյունաբերական | 0.8 | |
| | Ընդամենը | | 9.2 | |

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԱՎՆԱՁՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ , 2023ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՀԱՏԿԱՑՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՑԱՆԿ

| Հ/հ | Հողամասի նպատակային նշանակությունը | Հողամասի գործառնական նշանակությունը կամ հողատեսքը | հողամասի չափը (հա) | նշումներ |
|---|---|---|---|---|
| 1 | Գյուղատնտեսական | վարելահող | 1.5 | |
| 2 | Գյուղատնտեսական | արոտավայր | 350 | |
| | Ընդամենը | | 351.5 | |

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՆԻՇԻԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 2023ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՕՏԱՐՎԵԼԻՔ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՑԱՆԿ

| Հ/հ | Օտարվելիք հողամասի նպատակային նշանակությունը | Օտարվելիք հողամասի գործառնական նշանակությունը կամ հողատեսքը | հողամասի չափը (հա) | նշումներ |
|---|---|---|---|---|
| 1 | Գյուղատնտեսական | բազմամյա տնկարկ | 51 | |
| 2 | Բնակավայրերի | բնակելի կառուցապատման | 0.8 | |
| | Ընդամենը | | 51.8 | |

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՆԻՇԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, 2023ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՀԱՏԿԱՑՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՑԱՆԿ

| Հ/հ | Հողամասի նպատակային | Հողամասի գործառնական նշանակությունը կամ հողատեսքը | հողամասի չափը (հա) | նշումներ |
|---|---|---|---|---|
| 1 | Գյուղատնտեսական | վարելահող | 2 | |
| 2 | Գյուղատնտեսական | արոտավայր | 300 | |
| 3 | Գյուղատնտեսական | խոտհարք | 10 | |
| | Ընդամենը | | 312 | |

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԵԼՓԻՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 2023ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՕՏԱՐՎԵԼԻՔ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՑԱՆԿ

| Հ/հ | Օտարվելիք հողամասի նպատակային նշանակությունը | Օտարվելիք հողամասի գործառնական նշանակությունը կամ հողատեսքը | հողամասի չափը (հա) | նշումներ |
|---|---|---|---|---|
| 1 | Գյուղատնտեսական | բազմամյա տնկարկ | 2 | |
| 2 | Բնակավայրերի | տնամերձ | 5 | |
| 3 | Գյուղատնտեսական | վարելահող | 5 | |
| | Ընդամենը | | 12 | |

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԵԼՓԻՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ , 2023ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՀԱՏԿԱՑՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՑԱՆԿ

| Հ/հ | հողամասի նպատակային նշանակությունը | Հողամասի գործառնական նշանակությունը կամ հողատեսքը | հողամասի չափը (հա) | նշումներ |
|---|---|---|---|---|
| 1 | Գյուղատնտեսական | Վարելահող | 10 | |
| 2 | Գյուղատնտեսական | Խոտարք | 30 | |
| 3 | Գյուղատնտեսական | Արոտավայր | 300 | |
| | Ընդամենը | | 340 | |

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԽԱՉԻԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 2023ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՕՏԱՐՎԵԼԻՔ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՑԱՆԿ

| Հ/հ | հողամասի նպատակային նշանակությունը | հողամասի գործառնական նշանակությունը կամ հողատեսքը | հողամասի չափը (հա) | նշումներ |
|---|---|---|---|---|
| 1 | Բնակավայրերի | տնամերձ | 4 | |
| 2 | Գյուղատնտեսական | այլ | 2 | |
| 3 | Գյուղատնտեսական | վարելահող | 5 | |
| | Ընդամենը | | 11 | |

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԽԱՉԻԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ , 2023ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՀԱՏԿԱՑՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՑԱՆԿ

| Հ/հ | Հողամասի նպատակային նշանակությունը | Հողամասի գործառնական նշանակությունը կամ հողատեսքը | հողամասի չափը (հա) | նշումներ |
|---|---|---|---|---|
| 1 | Գյուղատնտեսական | Արոտ | 50 | |
| 2 | Գյուղատնտեսական | Խոտհարք | 20 | |
| | Ընդամենը | | 70 | |

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՉԻՎԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 2023ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՕՏԱՐՎԵԼԻՔ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՑԱՆԿ

| Հ/հ | հողամասի նպատակային նշանակությունը | հողամասի գործառնական նշանակությունը կամ հողատեսքը | հողամասի չափը (հա) | նշումներ |
|---|---|---|---|---|
| 1 | Գյուղատնտեսական | վարելահող | 15 | |
| 2 | Բնակավայրերի | Բնակելի կառուցապատման | 1 | |
| | Ընդամենը | | 16 | |

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՉԻՎԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 2023ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՀԱՏԿԱՑՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՑԱՆԿ

| Հ/հ | Հողամասի | Հողամասի գործառնական | հողամասի չափը | նշումներ |
|---|---|---|---|---|
| 1 | Գյուղատնտեսական | վարելահող | 20 | |
| 2 | Գյուղատնտեսական | արոտավայր | 80 | |
| | Ընդամենը | | 100 | |

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՌԻՆԴ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 2023ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՕՏԱՐՎԵԼԻՔ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՑԱՆԿ

| Հ/հ | հողամասի նպատակային նշանակությունը | հողամասի գործառնական նշանակությունը կամ հողատեսքը | հողամասի չափը (հա) | նշումներ |
|---|---|---|---|---|
| 1 | Արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական | արտադրական | 0.5 | |
| 2 | Գյուղատնտեսական | վարելահող | 2.5 | |
| 4 | Բնակավայրերի | բնակելի կառուցապատման | 1.5 | |
| | Ընդամենը | | 4.5 | |

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՌԻՆԴ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 2023ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՀԱՏԿԱՑՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՑԱՆԿ

| Հ/հ | Հողամասի նպատակային նշանակությունը | Հողամասի գործառնական նշանակությունը կամ հողատեսքը | հողամասի չափը (հա) | նշումներ |
|---|---|---|---|---|
| 1 | Գյուղատնտեսական | արոտ | 80 | |
| 2 | Գյուղատնտեսական | վարելահող | 3 | |
| | Ընդամենը | | 83 | |

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԵՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ. 2023ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՕՏԱՐՎԵԼԻՔ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՑԱՆԿ

| Հ/հ | Հողամասի | Հողամասի գործառնական | հողամասի չափը | նշումներ |
|---|---|---|---|---|
| 1 | Գյուղատնտեսական | Վարելահող | 15 | |
| 2 | Բնակավայրերի | Հասարակական կառուցապատման | 0.5 | |
| 3 | Բնակավայրերի | Բնակելի կառուցապատման | 0.7 | |
| | Ընդամենը | | 16.2 | |

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԵՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ. 2023ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՀԱՏԿԱՑՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՑԱՆԿ

| Հ/հ | Հողամասի | Հողամասի գործառնական | հողամասի չափը | նշումներ |
|---|---|---|---|---|
| 1 | Գյուղատնտեսական | արոտ | 40 | |
| 2 | Գյուղատնտեսական | վարելահող | 2 | |
| | Ընդամենը | | 42 | |

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՓԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, 2023ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՀԱՏԿԱՑՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՑԱՆԿ

| Հ/հ | Հողամասի նպատակային նշանակությունը | Հողամասի գործառնական նշանակությունը կամ հողատեսքը | հողամասի չափը (հա) | նշումներ |
|---|---|---|---|---|
| 1 | Գյուղատնտեսական | վարելահող | 0.5 | |
| 2 | Գյուղատնտեսական | արոտավայր | 50 | |
| | Ընդամենը | | 50.5 | |

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՓԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ,2023ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՕՏԱՐՎԵԼԻՔ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՑԱՆԿ

| Հ/հ | Հողամասի նպատակային նշանակությունը | Հողամասի գործառնական նշանակությունը կամ հողատեսքը | հողամասի չափը (հա) | նշումներ |
|---|---|---|---|---|
| 1 | Գյուղատնտեսական | ջրովի վարելահող | 1,0 | |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | | 1,0 | |

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԽԱՉԻԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, 2023ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՆՀԱՏՈՒՑՑ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՓՈԽԱՆՑՎՈՂ ԱՆՇԱԺ ԳՈՒՅՔԵՐԻ ՑԱՆԿ

| Հ/հ | Գույքի նպատակային նշանակությունը, հասցեն | շինության կառուցման տարեթիվը | Գույքի մակերեսը, /քմ/ | նշումներ |
|---|---|---|---|---|
| 1 | Հանրակացարանի շենք/նախկին հիվանդանոցի շենք/թիվ 1 բնակարան | 1963 | 12.3 | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 2 | Հանրակացարանի շենք/նախկին հիվանդանոցի շենք/թիվ 3 բնակարան | 1963 | 58.24 | |
| 3 | Հանրակացարանի շենք/նախկին հիվանդանոցի շենք/թիվ 4 բնակարան | 1963 | 37.92 | |
| 4 | Հանրակացարանի շենք/նախկին հիվանդանոցի շենք/թիվ 5 բնակարան | 1963 | 7.75 | |
| 5 | Հանրակացարանի շենք/նախկին հիվանդանոցի շենք/թիվ 6 բնակարան | 1963 | 24.48 | |
| 6 | Հանրակացարանի շենք/նախկին հիվանդանոցի շենք/թիվ 7 բնակարան | 1963 | 12.3 | |
| 7 | Հանրակացարանի շենք/նախկին հիվանդանոցի շենք/թիվ 8 բնակարան | 1963 | 25.08 | |
| 8 | Հանրակացարանի շենք/նախկին հիվանդանոցի շենք/թիվ 9 բնակարան | 1963 | 39.6 | |

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՓԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, 2023ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՓՈԽԱՆՑՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻ ՑԱՆԿ

| Հ/հ | Գույքի նպատակային նշանակությունը, հասցեն | Շինության կառուցման տարեթիվը | Գույքի մակերեսը (ք.մ) | նշումներ |
|---|---|---|---|---|
| 1 | 1փողոց տուն 7/2, բնակելի տուն | 1971 | 127 | |
| 2 | 1փողոց տուն 7/1, | 1971 | 127 | |
| 3 | 1փողոց 2 փկղ. տուն 2/1, բնակելի տուն | 1971 | 127 | |
| 4 | 1փողոց 2 փկղ. տուն 2/2, բնակելի տուն | 1971 | 127 | |

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԳԵՎՈՐԳ ՍԻՄՈՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 ՀՈՒՆՎԱՐԻ 2023թվականի N 005-Ա

## ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2023ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետի և 83-րդ հոդվածի պահանջներով, և համաձայն Հայաստանի Հանրապետության «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 32-րդ հոդվածի Արենի համայնքի ավագանին ***որոշում է***

1. Հաստատել Արենի համայնքի 2023 թվականի տարեկան բյուջեն.

1) մուտքային մասով՝ 532027848 ՀՀ դրամ, որից՝

ա) սեփական մուտքեր՝ 177177000 ՀՀ դրամ,

բ) պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ՝ 323952900 ՀՀ դրամ,

գ) պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներ /սուբվենցիաներ/ 30897948 ՀՀ դրամ,

2) ծախսային մասով՝ 556920809,7 ՀՀ դրամ,

3) Բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդը՝

ա) վարչական մաս՝ 13946660 ՀՀ դրամ, որը ամբողջությամբ հատկացնել ֆոնդային բյուջե,

բ) ֆոնդային մաս՝ 946301,7 ՀՀ դրամ,

4) Անշարժ գույքի օտարումից մուտքեր՝ 10 000 000 ՀՀ դրամ:

2. Հաստատել համայնքի բյուջեի եկամուտները ըստ առանձին եկամտատեսակների՝ հատված 1

3. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ գործառնական դասակարգման՝ հատված 2

4. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ տնտեսագիտական դասակարգման՝ հատված 3

5. Հաստատել բյուջեի տարեսկզբի հավելուրդը կամ պակասուրդը՝ հատված 4

6. Հատատել համայնքի բյուջեի հավելուրդի օգտագործման ուղղությունները կամ պակասուրդի ֆինանսավորման աղբյուրները՝ հատված 5

7. Սահմանել որ ծախսերի ֆինանսավորումը կատարվում է ստացված փաստացի մուտքերի սահմաններում՝ պահպանելով ծախսերի համամասնությունները և թույլատրել Արենի համայնքի ղեկավարին .

ծախսերի տնտեսագիտական և գործառնական դասակարգման նախատեսված հոդվածների միջև <<ՀՀ Բյուջետային համակարգի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետի համապատասխան կատարել վերաբաշխումներ, որոնք չեն կարող գերազանցել հաստատված ծավալի 10%-ը:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԱՍԱՏՐՅԱՆ ՄՀԵՐ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԽԱՉԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԱՉԵ

ԾԱՏՈՒՐՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ՂԱԶԱՐՅԱՆ ԳՆԵԼ

ՂԱԶԱՐՅԱՆ ԳՐԻՇԱ

ՍԱՀԱԿՅԱՆ ՀՈՒՍԻԿ

ՍԱՄՎԵԼՅԱՆ ՍԵՎԱԿ

ՍՄԲԱՏՅԱՆ ՆԱՐԻՆԵ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**